ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հեռ./Ֆաքս՝ 010-53-09-86 **Երևան-19, Պռոշյան փող., 1-ին փակուղի 20**

«04» 07 202 թ. № 19/1071

«ԶԻՆՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ
(ՀՀ Երևան, Ավան-Առինջ, 2 մկշ, 3/3, 36)

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Վանեցյան

ՀՀ պետական պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2024թ. կարիքների համար հանդերձանքի մատակարարման նպատակով՝ Ծառայության և «Զինտեքստիլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 05.02.2024թ. կնքվել է ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/3-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 7428600 (յոթ միլիոն չորս հարյուր քսանութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն Պայմանագրի ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, բայց ոչ ուշ քան 30.04.2024թ.: Պայմանագրի շրջանակներում 30.04.2024թ. կնքված N2 համաձայնագրի համաձայն 1-ին (դաշտային կոստյում՝ կեպիով), 2-րդ (ձմեռային կոստյում արհեստական մորթե օձիքով), 9-րդ (կիտել և կիսաշրջազգեստ), 10-րդ (կիտել և կիսաշրջազգեստ) և 11-րդ (կիտել և կիսաշրջազգեստ) չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2024թ. մայիսի 30-ը:

Սահմանված ժամկետներում Ընկերությունը չի մատակարարել 1-ին, 2-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժիններով Ընկերությունը 2 անգամ ներկայացրել է գործվածքի նմուշ, որը չի համապատասխանել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին, ինչով պայմանավորված չի հաստատվել պատվիրատուի կողմից:

2024 թվականի հունիսի 17-ին Ընկերությունը ծանուցվել է, որ մինչև հունիսի 20-ը մատակարարումները չիրականացնելու դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծվի Գնորդի կողմից և Վաճառողից կպահանջվի հատուցել օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված ծախսերը (տույժ, որակավորման և պայմանագրի ապահովումներ):

Ծանուցմանը ի պատասխան 18.06.2024թ. Ընկերությունը պատասխան գրություն է ներկայացրել, որով տեղեկացրել է, որ անհրաժեշտ գործվածքը ներկրվել է Հայաստանի Հանրապետություն, խնդրել է լրացուցիչ 30 օր ժամանակ և հայտնել է փորձագիտական եզրակացությունը պատրաստ լինելու դեպքում ներկայացնելու պատրաստակամություն:

2024 թվականի հունիսի 25-ին Ընկերության կողմից ներկայացվել է գրություն և վերջինիս կից փորձագիտական եզրակացություն տրված 25.06.2024թ. «ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից, համաձայն որի գործվածքի փորձաքննության ցուցանիշներից երևում է, որ բաղադրության 35% բամբակ է, 65%-ը պոլիէսթեր:

Ծառայության կողմից իրականացված ստուգումների արդյունքում պարզ է դարձել, որ «ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն (ՀՎՀՀ 00493422) իրավունք չունի տալ նման եզրակացություն՝ տեղեկատվական բազաներում առկա տվյալների համաձայն՝ 2023 թվականի օգոստոսի 19-ից գտնվում է ժամանակավոր դադարեցված կարգավիճակում, ինչը հավաստվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից 28.06.2024թ. տրված N70-2/40526-2024 գրությամբ: Միաժամանակ համաձայն Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների «ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ իրական շահառու է հանդիսանում «Զինտեքստիլ» ՍՊԸ տնօրեն Ա.Վանեցյանը, ինչը ևս ներկայացված եզրակացության հավաստիությունը կասկածի տակ է դնում: Կեղծ տեղեկատվության ներկայացման ևս մեկ ապացույց է հանդիսանում 2024 թվականի հուլիսի 2-ին Ընկերության կողմից ներկայացված մեկ այլ փորձագիտական եզրակացությունը (տրված «Սիստեմէքս» ՍՊԸ-ի կողմից 21.06.2024թ.), համաձայն որի գործվածքի բաղադրությունը 49,1% բամբակ է, 50,9% պոլիէսթեր, ինչը չի համապատասխանում Պայմանագրով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին:

Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե 10 օրից ավելի խախտվել է ապրանքների մատակարարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները Ծառայությունը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ ապահովումների գումարների գանձման նպատակով:

Հայտնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 77004 (յոթանասունյոթ հազար չորս) ՀՀ դրամ՝ որը հաշվարկված է մինչև 03.07.2024թ.(ապրանքի մատակարարման ուշացում 23 աշխատանքային օր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացվելու են ՀՀ քննչական կոմիտե՝ համապատասխան իրավական գնահատական ստանալու նպատակով:

Հարգանքով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ